Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Յա. Զարոբյանի անվան N 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Առարկա՝ Դասվար

Թեմա՝ Ինչպես արդյունավետ դաս պլանավորել

Վերապատրաստող,մենթոր՝ Արմենուհի Մելքոնյան

Ուսուցիչ՝ Հասմիկ Թադևոսյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն …… 1

Ներածություն …… 2

Ո՞ւմ է անհրաժեշտ դասի պլանը ……..…… 4

Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումները դասը պլանավորելիս……6

Ինչպես արդյունավետ դաս պլանավորել ……9

Ուսուցման տաքսոնոմիաներ (աստիճանակարգումներ)……...10

ՈՒԴԱԿ աստիճանակարգումը (տաքսոնոմիան)……11

Ինչպես օգտագործել ՈՒԴԱԿ-ը դասապրոցեսում…….. 12

Ինչպե՞ս գրել դասի պլանը …….. 20

Դասի պլան կազմելը ……23

Դասի՝ հինգ քայլով պլանավորման ձևանմուշ ……26

Դաս- պլանի օրինակ ……..31

Եզրակացություն ……36

Առաջարկություն ……36

Օգտագործված գրականության ցանկ …… 37

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դասը դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպման ձև է: Դասին մասնակցում են մեկ կամ ավելի աշակերտ կամ սովորող: Դասը նաև դասագրքի մի հատված է կամ ավելի հաճախ կարճ ժամանակահատված, որի ընթացքում սովորողներին ուսուցանում են առանձին առարկա: Դասին սովորում են նաև ինչպես կատարել որոշակի գործողություններ:

Կառուցվածքային տարրերի կարգով որոշվում է դասի հիմնական նպատակը և բովանդակությունը, ուսումնական պրոցեսի տրամաբանությունը: Դասի կառուցվածքային տարր է համարվում դասի արդյունավետ պլանավորումը: Պլանավորել նշանակում է.

1. **որևէ բանի զարգացման՝ իրագործման պլան կազմել՝ մշակել**
2. **պլանով սահմանել՝ ենթադրել, ծրագրել, տեսակավորել, նախագծել, նախատեսել:**

Թեմայի արդիականությունը

Պլանը դա ալգորիթմ է, որը սահմանում է ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը շեղվելով դասից, կենտրոնացած է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների վրա: Նրանք զբաղված են սպորտով, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Աշխատանքի նպատակը

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Արդյունավետ հարցեր տալը ամենակարևոր հմտություններից մեկն է, որ ուսուցիչը կարող է զարգացնել: Հարցերը կարող են ներգրավել աշակերտներին դասը հասկանալու գործընթացի մեջ և օգնել նրանց գտնել և հասկանա կարևորը երկրորդայինից: Հարցերը նաև օգնում են աշակերտներին խորհել, թե ինչ ազդեցություն ունի դասը նրանց կյանքի

վրա և մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել դասի սկզբունքները այժմ և հետագայում: Արդյունավետ հարցեր տալը կարող է խրախուսել աշակերտներին:

Ուսուցումը կոմպլեքս և բազմակողմանի հանձնարարություն է: Ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կլցնի հատորներ: Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար:

Եվ ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով, դասի հերթական մասերը ճիշտ և սահուն անցկացնելու նպատակով, ուսուցիչը պլանավորում է դասը:

Խնդիրները

- Ապահովվել պլանավորման գործընթացները:
- Հստակ ձևակերպել դասի նպատակը
- Հիշել և կենտրոնանալ դրա վրա:
- Արդյունավետ հարցեր տալ:
- Երբեք չշփոթել կարևորը արագության հետ:

1. Ո՞ւմ է անհրաժեշտ դասի պլանը

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է: Այդ ձևում ներդրված են կրթական դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝

- **նպատակ,** որը հանգեցնում է ակնկալվող վերջնարդյունքներին
- **բովանդակություն**
- **միջոցներ**
- **մեթոդներ**
- **կազմակերպման գործունեություն** և դրանից բխող
- **դիդակտիկ տարրեր**

Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ:

Բոլոր ուսուցիչներն էլ գիտակցում են, որ դասն առանց պլանավորելու՝ «անպատրաստ», հնարավոր չէ մտնել դասարան: Սակայն ուսուցիչներն հաճախ մտածում են արագ ավարտել «պլանը գրելու գործընթացը», որը ուսուցիչների մի մասը համարում են կարևոր, իսկ մյուս մասը՝ ժամանակի անիմաստ կորուստ (չէ որ ուսուցիչը դասը պլանավորում է իր ողջ օրվա ընթացքում): Արդյունքում ստեղծված լարվածությունը նրանց հեռացնում է իրենց նպատակից:

Թե ուսուցիչներին և թե աշակերտներին անհրաժեշտ է դասի պլանը:

Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան:

Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:



Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ մեթոդներ օգտագործել, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ: Ուսուցիչները պետք է ընտրեն մեթոդներ, որոնք լավագույնս կօգնեն աշակերտներին հասկանալ դասի որոշ հատվածի բովանդակությունը, իմաստը և սկզբունքները, և որ կհեշտացնեն սովորելը և կիրառելը: Որոշակի կարողություն կամ հմտություն օգտագործելու նպատակը մտքում պահելը կօգնի ուսուցիչներին իրագործել այն ավելի իմաստալից ձևով: Նաև կարևոր է հիշել, որ առանց սովորելու ցանկության նույնիսկ ամենաարդյունավետ մեթոդները և մոտեցումները հաջողության չեն հասնի:

Ուսուցման պլանավորումը ենթադրում է ոչ միայն դասերի պլանավորում, այլև ուսումնական գործունեության պլանավորում առավել ընդհանրական մակարդակով: Այդ առումով ստորև ներկայացվում են պլանավորմանն աջակցող մի շարք գործիքներ:

2.Արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումները դասը պլանավորելիս

Եթե **դասի խնդիրները** վերջնակետ են, որտեղ ուսումնական գործընթացի մասնակիցները (ուսուցիչ, աշակերտ) ձգտում են հասնել, ապա **դասի պլանը** այդ վերջնակետին հասնելու երթուղին է, իսկ **գնահատումը** հնարավորություն է տալիս որոշել հասել են վերջնակետին, թե՝ ոչ:



Արդյունավետ պլանավորումը ներառում է 3 բաղադրիչներ՝

1. **Որո՞նք են ուսուցման նպատակները** (գիտելիքներ, հմտություններ և կարողություններ):
2. **Ինչպիսի՞ն է դասի կառուցվածքը**:
3. **Ինչպե՞ս պետք է գնահատել աշակերտների գիտելիքները և հմտությունները** :

Դասը պլանավորելիս հիշենք արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումները

- **Մտաբերում**

Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը: Հետաքրքիր է, որ «կրթություն» բառի լատիներեն «Education» համարժեք բառի արմատը՝ «Educe», թարգմանաբար նշանակում է «դուրս բերել»: Ուսուցման գործընթացում մենք հաճախ ավելի կարևորում ենք գիտելիք տալը: Բայց դասը պլանավորելիս պետք է հիշել, որ սովորելու չափանիշը իմացածը դուրս բերելն է, որ հայերեն կարող ենք կոչել մտաբերում:

- **Նյութի սփռում ժամանակի մեջ**

Կարճ ժամանակաընթացքում սովորածը ավելի արագ է մոռացվում, քան երկար ժամանակում սովորածը: Դասը պլանավորելիս պետք է հիշել, որ կարևոր թեմաները ոչ թե պետք է ուսուցանել մեկ դասի ընթացքում և առաջ անցնել, այլ պետք է դրանց անընդհատ անդրադառնալ:

- **Խառը ուսուցում**

Խառը ուսուցման դեպքում աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն են:

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը: Սա հատկապես տեսանելի է մաթեմատիկայի դեպքում:

- **Մանրամասնում**

Հաճախ հետադարձ կապ տալիս ուսուցիչները միայն նշում են թե ինչն է ճիշտ կամ սխալ, մինչդեռ կարևոր է մանրամասնել թե ինչու է սխալ:

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ: Ինչն է հասկանում, ինչը չի հասկանում, ինչն է դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Հետևաբար՝ շատ կարևոր է դասը պլանավորելիս՝ մանրամասնել և անդրադառնալ՝ ինչու է այդպես, ինչից է բխում այդ հետևությունը և նմանատիպ այլ հարցերը: Շատ արդյունավետ հնար է մանրամասնող հետադարձ կապը:

- **Օրինակներով ուսուցում**

Եթե ուսուցիչը մեկի փոխարեն մի քանի օրինակներ բերի,ապա նյութը հասկացողաշակերտների թիվն էապես կավելանա: Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան:

I. **Չպետք է բավարարվել մեկ օրինակ բերելով:**

II. **Շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա : Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:**

- **Պատկերի և տեքստի համադրում**

Արդյունավետ ուսուցման գործընթացում պարտադիր է տեքստի, խոսքի ուղեկցումը պատկերներով: Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:

- **Մետաիմացություն**

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Ահա այն երեք հարցերը, որը պետք է իրեն տա յուրաքանչյուր սովորող:

1. **Որտեղ եմ ես:**
2. **Որտեղ պիտի լինեի:**
3. **Ինչպես հասնեմ այնտեղ, որտեղ պիտի լինեի:**

3. Ինչպես արդյունավետ դաս պլանավորել

«Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին»

Վ. Ա Սուխոմլինսկի

Դասը դասակարգում են ըստ

- ✓ **դիդակտիկ նպատակների**
- ✓ **գիտելիքների կազմակերպման նպատակների**
- ✓ **դասի անցկացման միջոցների և բովանդակության**
- ✓ **ուսումնական գործընթացի հիմնական փուլերի**
- ✓ **դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների**
- ✓ **դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների**:

Արդի մանկավարժությունը ընդհանրացնելով այդ տեսակավորումը՝ ներկայացնում է դասերի **հետևյալ** տիպերը՝

1. **Նոր ուսումնական նյութի հաղորդման, յուրացման դաս:**

Նոր նյութի յուրացման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

- ❖ **նախնապես ծանոթացնի ուսուցանվող նյութին**՝ հաշվի առնելով մասնակիցների ճանաչողության օրինաչափությունները:
- ❖ **մատնանշի** ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները:
- ❖ **ձևավորել** հիշելու և հիշողությունում երկարատև պահպանելու մոտիվացիա:
- ❖ **զարգացնել** մտապահման տեխնիկան
- ❖ եզրահանգումների և կրկնողությունների միջոցով **կատարել** նյութի նախնական **ամրապնդում**
- ❖ աշակերտներին **մղել նոր գիտելիքների ձեռք բերման** համար նախկինում ստացած գիտելիքների և հմտությունների մշտապես կիրառման
- ❖ նյութի հիշման և կիրառման արդյունքները կանոնավոր **գնահատել**:

3.1 Ուսուցման տաքսոնոմիաներ (աստիճանակարգումներ)

Վերջին տասնամյակներում կրթության ոլորտում մեծ տարածում են գտել տաքսոնոմիաները: Դրանք նպատակ ունեն զանազանելու ուսուցման տարբեր մակարդակներն ու ուսուցիչներին օգնել ուսուցումն ավելի բազմազան դարձնելու և սովորողների մոտ տարբեր մակարդակի հմտություններ ու կարողություններ զարգացնելու հարցերում:



իմացությունը բաժանվում է մասեր

ուսուցիչը աշակերտներին գիտելիք է մատուցում

Եթե ուսուցիչը ցանկանում է ուսուցումը կառուցել փոքր գաղափարից տանելով դեպի ընդհանուրը, ապա ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածքը (ՈԻԴԱԿ) շատ օգտակար գործիք է: Իսկ Բլում-Անդերսոնի աստիճանակարգումը օգտակար է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսումնական գործընթացը տրոհել մասերի:

3.2 ՈԻԴԱԿ աստիճանակարգումը (տաքսոնոմիան)

Կրթության մասնագետներ Ջոն Բիգսը և Քևին Քոլիսը մշակել են ուսումնառության հետաքրքիր մի աստիճանակարգում, որը սովորողների կողմից նյութի յուրացումը ներկայացնում է 5 մակարդակներով: Այն կոչվում է **Ուսումնառության Դիտարկված Արդյունքների Կառուցվածք՝ ՈԻԴԱԿ:** Այս աստիճանակարգումը ցույց է տալիս ուսումնական նյութի յուրացման աճն ըստ գիտելիքը կապակցելու աստիճանի: Այս աստիճանակարգումը չափազանց օգտակար է Հայաստանի ուսուցիչների համար: Այս աստիճանակարգումը ուսուցիչներին հնարավորություն է

տալիս ուշադրության կետրոնում պահելու, թե ինչ չափով են աշակերտները կարողանում կապակցել գիտելիքը և դրա հիման վրա ստեղծել նոր գիտելիք:

Գիտելիքի մակարդակը	Նկարագրությունը
1. Չկապակցված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. **«ես չեմ հասկանում»:**	Սովորողն ունի չկապակցված տեղեկատվություն նյութի մասին, որն իմաստալից չէ:
2. Միակապ այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. **«ես որոշ բաներ հասկանում եմ»:**	Սովորողը բազմաթիվ կապեր է հաստատում, բայց դեռևս չի նկատում մեծ պատկերը:
3.բազմակապ Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. **«ես բավականաչափ հասկանում եմ այս թեման»:**	Սովորողը բազմաթիվ կապեր է հաստատում, բայց դեռևս չի նկատում մեծ պատկերը:
4.ամբողջացված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. **«ես կարող եմ կապակցել թեմայի մասին իմ գիտելիքները մեծ գաղափարի հետ»**:	Սովորողը տեսնում է մասերի և ամբողջի կապը
5.ընդլայնված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «ես ունեմ մի քանի գաղափար, որոնք կարող եմ կապակցել մեծ գաղափարի հետ և տեսնել նորովի»:	Սովորողը ոչ միայն տեսնում է ամբողջը, այլև կարողանում է այն տարածել այլ տիրույթի վրա:

3.3 Ինչպես օգտագործել ՈՒԴԱԿ-ը դասապրոցեսում

ՈՒԴԱԿ-ը ոչ միայն աշակերտների կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանը գնահատելու գործիք է, այլև կարող է օգտագործվել դասապրոցեսում: Հիմնվելով ՈՒԴԱԿ-ի մակարդակների վրա՝ աշակերտներին կարող եք տալ հետևյալ առաջադրանքները ։

Մակարդակ	Առաջադրանք
2. Միակապ	Գրե՛ք մեկ փաստ թեմայի վերաբերյալ:
3. Բազմակապ	Փակցրե՛ք ձեր գրած մեկ փաստը գրատախտակին և ընթերցե՛ք ձեր դասընկերների կողմից գրվածները:
4. Ամբողջացված	Գտե՛ք ընդհանրություն գրատախտակին փակցված տեսակետներից մի քանիսի միջև:
5.ընդլայնված	Մեկ պարբերությամբ շարունակե՛ք հետևյալ նախադասությունը. «այս ամենն ինձ հիշեցրեց…» կամ՝ «այս ամենը կիրառելի է նաև…»:

3.4 Բլումի և Անդերսոնի աստիճանակարգումը (տաքսոնոմիան)

Հայաստանի մանկավարժական գրականության մեջ բավականաչափ ներկայացվել է Բենջամին Բլումի աստիճանակարգումը: 20-րդ դարի կեսերին ձևակերպված այս աստիճանակարգումը նպատակ ուներ սահմանելու որ ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն գիտելիքը, այլև՝ **ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրումը և արժևորումը:** 2001թ.-ին Բլումի աշակերտ Անդերսոնը մասնակի փոփոխություն կատարեց աստիճանակարգման նախնական տարբերակում՝ այն դարձնելով ավելի տրամաբանված: Մասնավորապես, Անդերսոնը նկատեց, որ Բլումի տաքսոնոմիայում բոլոր աստիճանները գործողություններ են՝ բացի գիտելիքից: Նա «գիտելիքը» փոխարինեց «հիշել» բայով: Իսկ «համադրության» փոխարեն առաջարկեց «ստեղծել» շատ կարևոր նպատակը:

Բլումի և Անդերսոնի տաքսոնոմիաները



ՈՒԴԱԿ աստիճանակարգը համադրական է: Բլումի-Անդերսոնի մոտեցումը վերլուծական է: Երկուսն էլ կարևոր են դասապրոցեսում: ՈՒԴԱԿ-ը կարելի է օգտագործել մասերից ամբողջը գնալու նպատակով, իսկ Բլում-Անդերսոնը՝ ամբողջից մասերը գնալու նպատակով:

Անդերսոնի տաքսոնոմիայի նկարագրությունը

Բլումի տաքսոնոմիական կառուցվածքը	Նկարագրող բառեր
Գնահատում Գիտելիքի մասին դատողություններ անել	Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություն անել, լուծել, ռեյտինգավորել, արժևորել, գնահատական տալ
Համադրում Ստեղծել նոր գաղափարներ կամ առարկաներ	Առաջադրել թեզ, կանխատեսել, ստեղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել, համադրել
Վերլուծություն Տեղեկատվությունը մասերի բաժանել	Ուսումնասիրել, միավորել, տարանջատել, դասակարգել, հայտնաբերել, զննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել
Կիրառություն Տեղեկատվությունը գործածել, գործադրել, կիրառել	Փորձել, դիագրամ կառուցել, կատարել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերածել, կառուցել, զեկուցել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարրերը իրար հետ համադրել, հարմարեցնել

Ընկալում Տեղեկատվությունը հասկանալ	Հանրագումարել, համեմատել, փորձարկել, տարրական զուգահեռներ տանել, ցուցադրել,
Վերլուծություն Տեղեկատվությունը մասերի բաժանել	Ուսումնասիրել, միավորել, տարանջատել, դասակարգել, հայտնաբերել, զննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել բացատրել, վերաձևակերպել, քննարկել
Գիտելիք Տեղեկատվությունը գտնել կամ հիշել	Պատմել, ցուցադրել, թվարկել, տեղադրել, կրկնել, սահմանել, բացատրել, քննել, մտաբերել, անվանել, ցույց տալ

2. **Գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների զարգացման, ամրապնդման դաս:**

Դասի ժամանակ ուսուցիչը պետք է բացահայտի նախատեսված աշխատանքի նպատակը, իրականացնի հետևյալ քայլերը

- վերարտադրել առաջադրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ գիտելիքները, կարողությունները և հմտությունները:
- կատարել տարբեր խնդիրներ, վարժություններ և առաջադրանքներ:
- ստուգել կատարված աշխատանքները:
- քննարկել և ուղղել սխալները
- անհրաժեշտության դեպքում հանձնարարել տնային առաջադրանք:

3. **Գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների կիրառման, ստուգման և շտկման դաս:** Այս դասի ժամանակ ուսուցիչը պետք է կարողանա
   - **Վերլուծել** սովորողի կարողունակությունը

- **Համեմատել, հակադրել, տարբերակել, քննադատել, փորձել, բաժանել, դասակարգել**
- **Արժևորել.** սովորողի կարողունակությունը ՝ հիմնավորելու տեսակետ կամ որոշում:
- **Գնահատել, վիճարկել, պաշտպանել, հիմնավորել, փաստարկել, դատողություն անել**
- **Ստեղծել.**սովորողի կարողունակությունը ստեղծելու ինչ-որ կամ ձևակերպելու տեսակետ
- **Կառուցել, համադրել, ստեղծել, ձևավորել, զարգացնել, ձևակերպել, շարադրել**

4. Գիտելիքների, կարողունակությունը ու հմտությունների ձևավորման դաս:

կարողունակությունը և հմտությունների ձևավորման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

- ✓ շեշտադրել դասի նպատակները
- ✓ կրկնել ձևավորված հիմնարար կարողունակությունը և հմտությունները
- ✓ կատարել ստուգողական վարժություններ
- ✓ ծանոթացնել նոր կարողությունների հետ, ցուցադրել կարողությունների ձևավորման օրինակ
- ✓ կատարել նոր կարողությունների յուրացմանը միտված վարժություններ
- ✓ կատարել նոր կարողությունների ամրապնդմանը միտված վարժություններ
- ✓ ըստ օրինակի կատարել ալգորիթմի կատարմանը միտված մարզող վարժանքներ
- ✓ կատարել ստեղծարար բնույթի վարժանքներ
- ✓ ամփոփել դասը
- ✓ հանձնարարել տնային առաջադրանք

5. Ընդհանրացման և համակարգման դաս:

Ընդհանրացնող դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

- ✓ իրականացնել դասի կազմակերպչական մասը
- ✓ ներկայացնել նախաբան, որով կարևորում է ուսումնասիրվող նյութը, հաղորդում է դասի նպատակը և պլանը
- ✓ կատարել անհատական և խմբային տարաբնույթ ընդհանրացնող և համակարգող բնույթի բանավոր և գրավոր առաջադրանքներ

- ✓ ստուգել կատարված աշխատանքները, անհրաժեշտության դեպքում ՝ ուղղել
- ✓ ձևակերպել ուսումնասիրված նյութերի եզրահանգումները
- ✓ գնահատել դասի արդյունքները
- ✓ ամփոփել դասը
- ✓ հանձնարարել (ոչ միշտ) տնային առաջադրանք։

6. Ամրապնդման դաս։

Ամրապնդման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

- կազմակերպել դասի սկզբը
- առաջադրել դասի կրթական, դաստիարակչական և զարգացողական խնդիրները
- ստուգել տային առաջադրանքը՝
- ամփոփել կրկնողության արդյունքները, ստուգել դասի ժամանակ ուսուցողական աշխատանքների արդյունքները
- հանձնարարել տնային առաջադրանք։

7. Թեմատիկ ստուգողական կամ սխալների ուղղման դաս։

Թեմատիկ ստուգողական կամ սխալների ուղղման դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝

- կազմակերպել դասի սկզբը
- Աշակերտները չպետք է վախենան կամ պահանջվածից շատ անհանգստանան ստուգողական աշխատանքից, քանի որ ուսուցիչն ստուգում է նյութի հետագա ուսումնասիրման համար երեխաների անհրաժեշտ պատրաստվածությունը։
- Առաջադրել դասի խնդիրները։
- Ուսուցիչը հաղորդում է նյութը, որը ստուգելու կամ վերահսկելու է։
- Խնդրում է , որ աշակերտները հիշեն համապատասխան կանոնները և աշխատանքի ընթացքում կիրառեն դրանք։
- Հիշեցնում է, որ աշակերտներն անպայման ստուգեն իրենց աշխատանքները։
- մեկնաբանել ստուգողական կամ վերահսկողական աշխատանքի (խնդիրներ, օրինակներ, թելադրություն, շարադրություն կամ հարցերի պատասխաններ և այլն) բովանդակությունը։

- Առաջադրանքները ծավալով կամ բարդության աստիճանով պետք է համապատասխանեն դպրոցական ծրագրին և հասկանալի լինեն յուրաքանչյուր աշակերտին
- ամփոփել դասի արդյունքները։
- Ուսուցիչն ընտրում է աշակերտների լավագույն աշխատանքները վերլուծում է մյուս աշխատանքներում թույլ տրված սխալները և կազմակերպում է սխալների ուղղման աշխատանքը (երբեմն դրա վրա ծախսվում ողջ հաջորդ դասը)։
- վեր հանել սխալները , ինչպես նաև բացահայտել դրանց վերացման ճանապարհները և կատարելագործել գիտելիքներն ու կարողությունները։

8. Համակցված կամ խառը դաս:

Համակցված դասի ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝ (այս դասը ունենում է մեկ կամ մի քանի դիդակտիկ նպատակներ)

- կազմակերպել դասի սկզբը
- ստուգել տնային առաջադրանքը, առաջադրել դասի նպատակը։
- նախապատրաստել աշակերտներին նոր նյութի ընկալմանը, այսինքն արդիականացնել գիտելիքներն ու գործնական և մտավոր կարողությունները
- աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել նոր նյութը
- անհրաժեշտության դեպքում տալ համապատասխան բացատրություններ
- ամրապնդել տվյալ դասի ընթացքում ուսումնասիրած և նորի հետ փոխկապակցված նախորդ նյութերը։
- ընդհանրացնել և համակարգել գիտելիքները և կարողությունները, փոխկապակցել նոր և նախկինում ստացված ու ձևավորված գիտելիքները։
- ամփոփել դասի արդյունքները։
- հանձնարարել տնային առաջադրանք
- նախապատրաստել (ոչ միշտ) նոր նյութի ուսումնասիրմանը (նախնական աշխատանք)։

Դասի ոչ ավանդական ձևերն են՝

- Դերային խաղեր ,Դաս-ներկայացում
- Հեքիաթային դիպաշարի կատարում
- Ստուգատես ,Մտապատկերների դաս
- Դաս-խաղ ,Գործարար խաղ
- Դաս-ստուգարք ,Դաս-փոխուսուցանում
- Դաս-ճանապարհորդություն
- Կլոր սեղան կամ կոնֆերանս
- Դաս-մրցույթ ,Դաս-մամլո ասուլիս
- Բաց մտքերի դասավանդում
- Դաս-երկխոսություն,Դաս-վիկտորինա
- Խաղ «Հետաքննությունը վարում են գիտակները»
- Արդիական հարցազրույցներ
- Գիտելիքների աճուրդ
- Իմիտացիոն-դերային մոդելավորում
- Դաս-բանավեճ
- Ուսանողների մտածելակերպի մոդելավորում
- Դաս-մրցաշար , Դերային խաղ-բիզնես
- Դաս-Էվրիկա, Դաս-դասախոսություն
- Խաղ "Կախարդական ծրար»
- Միջառարկայական ինտեգրված դաս

4.Ինչպես գրել դասի պլանը

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների կարևոր գործոնն է: Ուսուցչի մասնագիտական որակներից մեկն էլ դասը ճիշտ պլանավորելն է: Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ սովորեցնել
- Ինչո՞ւ սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել:

Ելնելով զարգացնող կրթության սկզբունքներից՝ ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի օգնի աշակերտին ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերել: Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

- **Դասի թեման**
- **Դասի նպատակները** (կրթական, զարգացնողական, դաստիարակչական):
- **Դասի տեսակը** (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման):
- **Դասի ընթացքը**

ՈՒսուցման գործընթացում կիրառվում է դասի 3 փուլ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) կազմված մի մոդել, որն անվանում են նաև **ԽԻԿ** համակարգ: ԽԻԿ համակարգի առաջին փուլը **խթանումն է**: Այս փուլի նպատակն է աշակերտների հետաքրքրությունը խթանել, նպաստել, որ նրանք խորհեն նոր հաղորդվելիք թեմայի մասին: Կարողանան վեր հանել թեմային առնչվող նախնական գիտելիքները, հարցեր տալ և սահմանել սովորելու կոնկրետ նպատակները:

Դրան հաջորդում է **իմաստի ընկալման** փուլը, որի ընթացքում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցով ծանոթանում են նոր նյութին, և այդ ընթացքում նրանցից ակնկալվում է, որ կարողանան նոր տեղեկությունները, գաղափարները կամ բովանդակությունը ներհյուսել իրենց սեփական՝ արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ: Ավարտվում է **կշռադատման փուլով**, որի ընթացքում աշակերտներն իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին՝ վերակառուցելով իրենց գիտելիքները:

• **Դասավանդման մեթոդները՝** բանավոր (անհատական, համընդհանուր) կամ գրավոր (ինքնուրույն, ստուգողական աշխատանք, թելադրություն) հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, պատմվածք, զրույց, զրույցի տարրերով պատմվածք, տեղեկույթի աղբյուրների հետ ինքնուրույն աշխատանք, վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների կատարում սովորական կամ խաղային ձևով:

• **Աշխատանքների ընդունում** սխեմայի կազմում, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեքստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ **մտավոր գործունեության ակտիվությունը** նյութի հետ ծանոթացմանը համաընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ,

Աշակերտների մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ, համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որը աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում, դրանից հետո առաջարկում է աշակերտներին կարդալ գիրքը, լսել ուսուցչի կամ հարցման համար գրատախտակի մոտ կանչված աշակերտին: Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի զորու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը: Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ունենան, հակառակ դեպքում ոչ բոլոր աշակերտները կկարողանան դասարնում կատարել առաջադրանքը: Եթե դասավանդման մեթոդները համարենք ուսուցչի և աշակերտների փոխկապակցված գործունեության համակարգված միջոցներ, որոնք ուղղված են դասի նպատակին հասնելուն, ապա յուրաքանչյուր մեթոդի նկարագրությունը պետք է ներառի՝

- ✓ **ուսուցչի** ուսուցողական **գործունեության նկարագրությունը**
- ✓ **աշակերտի** ուսումնական-**ճանաչողական գործունեության նկարագրությունը**



Ակտիվ մեթոդ - սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ:

- **Ամփոփում**

Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի ավարտին: Խնդիրները որքանո՞վ պետք է արդեն լուծված լինեն:

- **Դասից հետո**

Իսկ դասից հետո սեփական աշխատանքը վերլուծելու համար կարևոր է պատասխանել էլի մի քանի հարցի:

- **Հավելյալ աշխատանք**

Ի՞նչ հետագա իմացության կարող է մղել այս դասը: Այս դասն ավարտելուց հետո ի՞նչ պետք է անեն աշակերտները: Մանրմասնենք Դասի նպատակը:

- **Դասի նպատակը**

  Նպատակն այն կետն է, որին ուսուցիչը պետք է հասնի իր գործունեության միջոցով:

  Նպատակը պատասխանում է **ի՞նչ սովորեցնել** հարցին:

  Դասի նպատակի սահմանման ձևակերպումը կարելի է սկսել հետևյալ բայերով՝

  - **ուսուցանել**
  - **զարգացնել**
  - **նպաստել**
  - **ամրապնդել**
  - **խորացնել**
  - **ձևավորել**

  Դասի խնդիրն այն քայլաշարն է, որը կազմում է ուսուցիչը **նպատակին** հասնելու համար:

  Վերջնարդյունքները՝

  Հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պետք է գիտենա, կարողանա, արժևորի

- **Գիտելիք** - ինքնաճանաչողություն և ինքնաքննադատական ընկալում, լեզվի և հաղորդակցման միջոցների իմացություն և քննադատական ընկալում
- **Հմտություն** - ինքնակրթվելու, վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ, ճկունություն և հարմարվողականություն, համագործակցային հմտություններ, հակամարտությունների կարգավորման հմտություններ
- **Դիրքորոշում** - հարգանք, քաղաքացիական, մտածողություն, ինքնակառավարման արդյունավետություն, հանդուրժողականություն անորոշության նկատմամբ
- **Արժեքային համակարգ** -արժևորել …
- **մարդկային** արժանապատվությունը և մարդու իրավունքները…
- **Մշակութային** բազմազանությունը
- **Ժողովրդավարությունը,** արդարությունը, արդարադատությունը,հավասարությունը
- **Օրենքի** գերակայությունը

4.1 Դասի պլան կազմելը

Դասի պլանը գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի։ Հաճախ դասի պլան - համառոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝

1. Կազմակերպչական մաս	2-3 րոպե
2. Նոր գիտելիքների հաղորդում	8-10 րոպե
3. Աշակերտների գործնական աշխատանք	20-26 րոպե
4. Տնային առաջադրանքի հանձնարարում	3-5 րոպե
5. Դասի ամփոփում	1-2 րոպե

Կարելի է նշել նաև այն տնային առաջադրանքը, որն աշակերտները կստանան հաջորդ դասին

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ դասի պլանի հիմնական բաղկացուցիչ մասն է։ Այստեղ ծավալուն ներկայացվում է դասի վարման գործողությունների հաջորդականությունը։ Այս բաժինը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով։ Այս բաժնում ներկայացվում է դասի ընթացքը, որտեղ ուսուցիչը ձևակերպում է առանձին տերմինների և հասկացությունների ձևակերպումներ, ծավալուն ներկայացնում է ուսումնական նյութը և պատկերային միջոցների կիրառման հնարքները։ Անհրաժեշտ է ուշադիր լինել պատկերներով կառուցվող մեթոդական հնարքների նկարագրման ժամանակ. այն ինչն ուսուցչին դյուրին է թվում, աշակերտների համար հաճախ անհամեմատ դժվար է լինում։ Այդ է պատճառը, որ պլանում անհրաժեշտ է որքան հնարավոր է մանրամասն նկարագրել դասարանի հետ աշխատանքի մեթոդաբանությունը։ Անհրաժեշտ է վերլուծելով նախորդ տարիների դասի պլանները, դրանք համադրել նորի հետ։ Սա հնարավորություն կտա կատարելագործել դասի փուլերը։

Դասի պլան կազմելիս պետք է հասնել դասի նպատակի, ուսումնական նյութի բովանդակության, կրթական մեթոդների և աշակերտների ճանաչողական գործունեության կազմակերպման ձևերի համապատասխանությանը։ Ինչքան բարձր է այդ համապատասխանությունը յուրաքանչյուր դասին, այնքան ազդեցիկ է դասի վերջնական արդյունքը։ Դասի նախապատրաստությունը աշակերտների

մտածողությունը ղեկավարելու համար է: Ուսուցչի համար շատ կարևոր է նախորոք հարցերը ձևակերպել այնպես, որ դրանք աշակերտների միտքն արթնացնի:

Ուսուցչի աշխատանքի ինքնավերլուծությունը պետք է դառնա նրա աշխատանքի անբաժանելի մասը: Մշակված դասի պլաններին անհրաժեշտ է համապատասխանեցնել ցուցադրական և դիդակտիկ, նաև էլեկտրոնային նյութեր:

Տարբեր մանկավարժներ տարբեր կերպ են տեսակավորել դասերը՝ ելնելով դասի ընթացքում կիրառվող մեթոդներից, դասի կազմակերպման ձևերից, կախված դասի բովանդակությունից և անցկացման եղանակից, ուսուցման նպատակից, ուսուցման գործընթացի հիմնական փուլերից և այլն:

4.2 Դասի՝ հինգ քայլով պլանավորման ձևանմուշ

Ամսաթիվ ……..

Առարկա ……..……..……

Դասարան ……..……..……

Աշակերտների քանակ ……..…

Դասի թեմա ……..

Դասի նպատակը Ուսուցանել,զարգացնել,նպաստել, Ամրապնդել, խորացնել,ձևավորել	**Կարևոր դրույթները** Բանալի հասկացությունները, անվանումներ, որոնք աշակերտը պետք է սովորի	**Անհրաժեշտ նյութերը, պարագաներ** Ի՞նչ է անհրաժեշտ դասի համարդիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:
Դասի ավարտին աշակերտները կկարողանան . . .		**Դասի սկիզբ**
		Նոր նյութի ներկայացում
		Ուղղորդված աշխատանք
		Ինքնուրույն աշխատանք
		Դասի ավարտ

Դասարանի, դասի նախապատրաստում
Ի՞նչ պետք է լինի դասարանում, սեղանին երբ աշակերտները մտնում են դասարան
Գնատահում Նկարագրեք՝ ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք) 1.ակտիվություն 2.տեսական նյութի տիրապետում 3.գործնականում կիրառելու կարողություն

Դասի սկիզբ

Ուղղորդումներ պլանավորելուհամար եւ **ՈՒՀՁ** ուղենիշներ	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն
Ուղղորդումներ պլանավորելու համար1.Վարքային եւ այլ սպասելիքների ներկայացում		
2.Ի՞նչ են սովորելու աշակերտները (դասի թեման եւ նպատակը)		
3.Կարեւոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ		
4.Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ:		
5.Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր:		
6.Ի՞նչ են պատրաստվում անել դասին:		
7.Խթանիչ վարժություն (եթե կա)		
ՈՒՀՁ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ՝ (1.2)/(1.3)Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար		

(3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ
(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը
(7.1) Բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար
(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը
(8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը
(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները

Նոր Նյութի մատուցում

Ուղղորդումներ պլանավորելու համար **ՈՒՀՁ ուղենիշներ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ի՞նչ են սովորում աշակերտները:		
Ինչպե՞ս են սովորում այդ նյութը:		
Արդյո՞ք նոր նյութը հանգում է կարևոր դրույթներին եւ տանում դեպի դասի նպատակը		
ՈՒՀՁ ուղենիշներ (1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար		
(2.1)/(2.2) Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները, շարահյուսությունն ու լեզվական կառույցները		
(2.3) Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը		
(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով		
(3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ		
(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը		
(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն		

կիրառելու գործունեությունը
(5.1) Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ
(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին
(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը
(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը

Ուղղորդված աշխատանք

Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ ուղենիշներ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
1. Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու:		
2. Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում :		
3. Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու		
4. Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու:		
5. Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են:		
ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ ՝ (1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար		
(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական		

կառույցները
(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը
(4.1) Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները
(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին
(6.3) Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը
(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը
(8.3) Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը
(8.4) Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ

Ինքնուրույն աշխատանք

Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն
1. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու:		
2. Ի՞նչ վարժություն, առաջադրանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար		
ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ (1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար		
(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները		
(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով		
(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը		
(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը		

(9.1) Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով
(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները

Դասի ամփոփում՝ անդրադարձ

Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ Ուղենիշներ**	Ուսուցչի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր	Աշակերտների գործողությունների նկարագրություն, ակնկալվող պատասխաններ
Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին		
2.Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին		
3.Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում		
ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ (3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը		
(5.2) Օգտագործել ուսունառության վերջնարդյունքի ձեւավորման եւ ստեղծման բազմապիսի միջոցներ		
(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը		
(8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը		
(9.3) Զարգացնել ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները		

Դաս- պլանի օրինակ

Դասի թեման ՝ Ա հնչյուն-տառի ուսուցում

Դասի նպատակը՝

- ✓ Սովորած ու նոր ուսուցանվող հնչյուն-տառը միավորելու, վանկային կապակցություններ ու բառեր ստանալու կարողությունների մշակում՝ հնչյունի իմաստազատիչ արժեքի գիտակցումով
- ✓ Ուղղախոսության մշակում
- ✓ Նախադասությունները միմյանց հետ կապակցելու և իմաստն ընկալելու կարողությունների ձևավորում
- ✓ Տառապատկերները ամբողջական ընկալելու և դրանք տրված օրինակին համապատասխան վերարտադրելու կարողությունների մշակում, տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողության մշակում

Դասի խնդիրները

- ❖ Կկատարեն վանկային և հնչյունային վերլուծություն
- ❖ Սովորած ու նոր ուսուցանվող Ա հնչյուն-տառը կմիավորեն և վանկային կապակցություններ ու բառեր կստանան
- ❖ Արտասանելիս կամ կարդալիս վանկի կամ բառի մեջ առաջարկված հնչյունը կառանձնացնեն բառից և կօգտագործեն բառասկզբում, բառամիջում, բառավերջում, տարբեր հնչյունների հետ ունեցած վանկային կապակցություններում
- ❖ կճանաչեն ձայնավոր Ա հնչյուն-տառը
- ❖ կճանաչեն Ա տառը/ մեծատառ և փոքրատառ/

Դասի կահավորումը

գիրք, տետր, քարտիկներ, A4 թղթեր, Ա հնչյուն - տառով սկսվող խաղալիքներ, գունավոր մատիտներ, ավազ, պաստառներ, համակարգիչ

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Մատներն իրա հպվեցին, դեպի երկինք ձգվեցին

Իրար ամուր զարկեցին, բարձ , բարձր ցատկեցին:

Դուր եկավ դա մատիկներին, ինչպես նաև թաթիկներին,

Երկու ձեռքով ծափ զարկենք, իրար ուրախ ողջունենք:

_ **Բարև ձեզ** :

_ **Բարև Ձեզ :**

Երգ «Ա՛րև, ա՛րև, ե՛կ, ե՛կ»

https://mp3heart.com/download/AFkq8gqBXUv_%D5%AF%D5%B8%D5%B4%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD-%D5%A1%D6%80%D6%87-%D5%A1%D6%80%D6%87-%D5%A5%D5%AF-%D5%A5%D5%AF/

_ **Ի՞նչ մասերից է կազմված պատմությունը** :

_ Նախադասություններից :

_ Պատմությունն ունի սկիզբ և վերջ:

_ Պատմությունն ունի նաև վերնագիր:

_ **Ի՞նչ կասեք նախադասությունների մասին**:

_ Նախադասությունն ունի սկիզբ և վերջ:

_ Նախադասությունը սկսվում է մեծատառով:

_ Նախադասության վերջում դնում ենք վերջակետ:

_ **Ինչերի՞ց է կազմված նախադասությունը**:

_ Նախադասությունը կազմված է բառերից:

_ **Բառերի մասին ի՞նչ կասեք**:

_ Բառերը կազմված են վանկերից:

- Թե բառն ասես մասերով

Մա-սե-րով,

Ամեն մասում մի ձայնավոր

Ձայ-նա-վոր,

Դու կխոսես վանկերով

Վան-կե-րով

Ամեն վանկը կարտասանես մի շնչով

Մի շնչով:

_ **Ի՞նչ է վանկը**:

_Տառերի կամ հնչյունների խումբ:

_ Ի՞նչ է տառը

_ Տառը հնչյունի պատկերն է:

_Տառը տեսնում ենք, հետո նաև կգրենք:

_ Հնչյունը արտասանում և լսում ենք:

Երգ «Հնչյուն -տառի երգը»

https://mp3apple.com/music/hnchyun+tari+erg/

_ Հնչյունները քանի՞ տեսակ են լինում :

_ Ձայնավոր և բաղաձայն :

_ Ասենք ձայնավոր հնչյունները արտահայտելով մեր տրամադրությունը :

_ Զարմացած

_ ա ա ա ա ա ա

_ Հիացած

_ օ օ օ օ օ օ օ օ օ օ

_ Ուրախ

_ ու ու ու ու ու

_ Բարկացած

_ ի իի ի ի ի ի

_ Անհանգիստ

_ է է է է է է է

_ Նեղացած

_ ը ը ը ը ը ը ը

_ Ի՞նչ ավելացնենք ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին :

_ Ձայնավոր հնչյունները ձայն ունեցող հնչյուններն են՝ երկա ենք լսում:

_ Բաղաձայն հնչյուններն էլ ձայն չունեցող հնչյուններն են, ը ձայնվորը խանգարում է, որ այդ հնչյունը լսենք:

_ Դրա համար ասում ենք, որ բաղաձայն հնչյուններն արտասանվում են արգելքով:

1. **Տրված բառերը ենթարկիր հնչյունային վերլուծության:**

Իմաստի ընկալում

Բացեք դասագրքերը

Համակարգչային դաս

http://aybbenaran.am/new/aybbenaran/images/slides/index.php?fbclid=IwAR1sYFWQ6RpmXVWsxBHB3HNTNCkw6o9tJqsLIZrn_2EdEvwYoZ0TU3jHbrA

Կշռադատման փուլ

1. Օղակի՛ր այն նկարը , որը սկսվում է Ա հնչյուն -տառով :

2. Օղակի՛ր Ա մեծատառը:

Անդրադարձ

3.Գտի՛ր Ա հնչյուն -տառի դիրքը և գրիր:

Վերջնարդյունքները՝ ըստ

Հանրակրթական Տարրական Ծրագրի Շրջանավարտի Ուսումնառության

Ակնկալվող Վերջնարդյունքների

9) հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.

10) նկարագրի շրջակա աշխարհի օբյեկտները, երևույթները և դրանց փոխադարձ կապերը.

22) կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը շոշափեց մի այնպիսի թեմա , որը կարևոր նշանակություն ունի թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների համար:

Ամփոփելով հետազոտական աշխատանքս եկա այն եզրահանգման, որ պլանը դա ալգորիթմ է, որը սահմանում է ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը: Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու, աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու համար, արդյունավետ հարցեր տալը ամենակարևոր հմտություններից մեկն է, որ ուսուցիչը կարող է զարգացնել դասը պլանավորելու միջոցով: Հարցերը կարող են ներգրավվել աշակերտներին դասը հասկանալու գործընթացի մեջ և օգնել նրանց գտնել և հասկանա կարևորը երկրորդայինից: Իսկ ճիշտ պլանավորված հարցերը նաև օգնում են աշակերտներին խորհել, թե ինչ ազդեցություն ունի դասը նրանց կյանքի վրա և մտածել, թե ինչպես նրանք կարող են կիրառել դասի սկզբունքները այժմ և հետագայում: Արդյունավետ հարցեր տալը կարող է խրախուսել աշակերտներին:

Ուսուցումը կոմպլեքս և բազմակողմանի հանձնարարություն է: Ուսուցման մեթոդների կամ հմտությունների ցուցակը կպարունակի շատ մտքեր ու օրինակներ և դրանց վերաբերյալ ողջ քննարկումը կզարգանի աշակերտների կարողությունը: Եվ հնարավոր է

խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների, մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար:
Ուրեմն ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով, դասի հերթական մասերը ճիշտ և սահուն անցկացնելու նպատակով, ուսուցիչը պետք է պլանավորի դասը, հստակ ձևակերպի դասի նպատակը , հիշի և կենտրոնանա դրա վրա:

Առաջարկություն

Ինչպես ժողովրդն է ասում. «Աչքերը գնում են տեսնելու այն, ինչ ականջները լսել են», դրա համար անհրաժեշտ է արդյունավետ պլանավորել դասերը և աշակերտների մեջ ձևավորել տեսնելու, լսելու, զարգանալու կարողություններ: **Դասավանդման ընթացքը դարձնել ավելի ակտիվ, մասնակցային և խրախուսել վերլուծական, քննադատական միտքը աշակերտների շրջանում:**

Քանի որ ուսուցիչը այսպես թե այնպես նպատակին հասնելու համար դասը պլանավորում է ողջ օվա ընթաքում: Առաջարկում եմ մշակել այնպիսի տարբերակ, որ պլան գրելը ծանր հոգեկն տրավմայի չենթարկի ուսուցչին և նրա մեջ չսպանի ստեղծագործելու, արարելու ձգտումը: Հիշենք, որ «Գլորվող քարը չի մամռակալի»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Սերգեյ Աշոտի Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան (Դպրոցական մատենաշար) (խմբ. Հովհաննես Զաքարյան), Երևան, ««Զանգակ-97» հրատարակչություն», 2011 (230 էջ)
- «Ուսուցման արդյունավետ հնարները» / Ս. Խաչատրյան Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020 էջ 13-19 /
- «Դասի Կառուցվածքային Տարրերի Կիրառումը Հանրակրթական Առարկաների Օրվա Պլանների Կազմման Գործընթացում» /(էջ 13-19) «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միություն Հասմիկ Այվազյան/